



## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

*Մարզկենտրոնը՝ ք. Գյումրի*



Տարածքը	2681 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	165737 հա
այդ թվում՝ վարելահողեր	84530 հա
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	116
Գյուղական բնակավայրեր	128
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	282.2 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	172.7 հազ. մարդ
գյուղական	109.5 հազ. մարդ

**ՀՀ Շիրակի մարզը** գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում: Սահմանակից է Թուրքիային և Վրաստանին: Մարզն ընդգրկում է Արթիկի, Ախուրյանի, Անիի, Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանները: Այն իր մեջ ներառում է 3 քաղաք՝ Գյումրի, Արթիկ, Մարալիկ և 128 գյուղական բնակավայրեր: Մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 9%-ը: Մարզի բնակչությունը 2003թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 8.8 %-ը, որի 61.2%-ը բնակվում է քաղաքներում, իսկ նրանց 52.9%-ը՝ միայն Գյումրի քաղաքում:

ՀՀ Շիրակի մարզն իր անունը ժառանգել է պատմական Հայաստանի Այրարատ աշխարհի Շիրակ գավառից: Լինելով ծովի մակերևույթից մոտ 1500-2000 մ բարձրության վրա (մարզի 52 գյուղեր գտնվում են ծովի մակերևույթից մոտ 1500-1700 մ, իսկ 55-ը՝ 2000 մ բարձրության վրա), հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը, որտեղ ձմռանն օդի ջերմաստիճանը երբեմն հասնում է  $-46^{\circ}\text{C}$ -ի:

Մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին: Այստեղ իրար են միանում Հայաստանի և Թուրքիայի երկաթուղային և ավտոճանապարհային ցանցերը:

ՀՀ Շիրակի մարզում գտնվում է օդանավակայան, որն ապահովում է օդային կապը ԱՊՀ երկրների հետ և հնարավորություն ունի ընդունել ցանկացած տիպի ինքնաթիռ:

Թուրքիայի հետ սահմանային Ախուրյան գետի վրա կառուցվել է Ախուրյանի ջրամբարը, որն իր 526 մլն. մ<sup>3</sup> ծավալով խոշորագույնն է հանրապետությունում:

Մարզի տարածքում են գտնվում Հառիճի (Արթիկից հարավ-արևելք), Մարմաշենի վանքերը (Գյումրիից հյուսիս-արևմուտք), Երերույքի (Անիպենգայի մոտ), Սառնաղբյուրի Հոգեվանքը (VIIդ), Արթիկի եկեղեցիները և այլ հնություններ, որոնց մեծ մասը կառուցվել են X-XI դդ.-ում և ճարտարապետական մեծ արժեք ներկայացնող կոթողներ են:

**ՀՀ Շիրակի մարզի** արդյունաբերության տեսակարար կշիռը 2003թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 2.8 %, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 9.8 %, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 1.9 % և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 3.6 %: ՀՀ Շիրակի մարզի արդյունաբերության առաջատար ճյուղերից են՝ սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրությունը և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Հայտնի են Արթիկի և Անիի տուֆն ու պեմզան: Մարզում զարգացած է նաև հացահատիկային մշակաբույսերի մշակումն ու անասնապահությունը:

2003թ. մարզում գործել են 117 արդյունաբերական, 7 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 38 շինարարական, 18 տրանսպորտային, 3 կապի 288 ծառայություններ մատուցող, 729 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 296-ը խանութներ են, 391 -ը՝ կրպակներ, 38-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 2-ը՝ սպառողական ապրանքների և 2 -ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

Մարզում գործել են նաև 177 պետական և 3 ոչ պետական հանրակրթական, 19 երաժշտական և արվեստի, 36 մարզական դպրոցներ, 50 նախադպրոցական հիմնարկ, 9 պետական և 2 ոչ պետական միջին մասնագիտական, 6 պետական (դրանցից՝ 5 մասնաճյուղ) բարձրագույն ուսումնական հաստատություններ և 2 ոչ պետական, 6 թանգարան, 132 գրադարան, 6 հյուրանոց, մշակութալուսավորչական մարզային նշանակության կենտրոններ, 36 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 19 հիվանդանոց:

Գյումրի քաղաքը (1924-1990թթ.՝ Լենինական) գտնվում է Երևանից 120կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1550 մ է: Այն բնակչության թվաքանակով և իր նշանակությամբ շարունակվում է համարվել որպես Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաք: Քաղաքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին: Բնակչության թվաքանակը 2004թ.ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 149.5 հազ.մարդ:

2003թ. քաղաքում գործել են 55 արդյունաբերական, 1 ձկնորսության և ձկնաբուծության, 21 շինարարական, 9 տրանսպորտային, 3 կապի, 238 ծառայություններ մատուցող և 492 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 197 -ը խանութներ են, 267 -ը՝ կրպակներ, 25 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 2 -ը՝ սպառողական ապրանքների և 1 -ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

Հարուստ պատմամշակութային ավանդույթներով Գյումրի քաղաքում 2003թ. գործել են 2 թատերական և 3 համերգային կազմակերպություններ, այդ թվում հայտնի դրամատիկական թատրոնը, 6 թանգարան և այլն: Քաղաքում գործող 6 հեռուստառադիո-ընկերություններ հեռարձակումներ են իրականացրել քաղաքի և մարզի տարածքի համար: Քաղաքում գործել են նաև 54 հանրակրթական, 9 երաժշտական և արվեստի, 29 մարզական դպրոցներ, 6 պետական և 2 ոչ պետական միջին մասնագիտական և 6 պետական (այդ

թվում՝ 5 մասնաճյուղ) և 2 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 26 նախադպրոցական հիմնարկ, 11 գրադարան և 5 հյուրանոց, 6 թանգարան, մարզային նշանակության մշակութալուսավորչական կենտրոններ, 15 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 11 հիվանդանոց և այլն:

**Ախուրյանի տարածաշրջան**

Վարելահողեր	19247 հա
Քաղաքային համայնքներ	-
Գյուղական համայնքներ	33
Գյուղական բնակավայրեր	36
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	46.0 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	-
գյուղական	46.0 հազ. մարդ

**Ախուրյանի տարածաշրջանը** գտնվում է մարզի կենտրոնում: Մարզի ոռոգվող հողերի մեծ մասը տեղաբաշխված է այստեղ, այն համարվում է մարզի սևահողային շրջանը, մարզի ընդհանուր ցանքատարածությունների 38.4%-ը պատկանում է Ախուրյանի տարածքին: Այստեղ զարգացած է բազմաճյուղ գյուղատնտեսությունը՝ հացահատիկի, կարտոֆիլի և անասնապահական մթերքի արտադրությունը և այլն:

2003թ. **տարածաշրջանում** գործել են 17 արդյունաբերական, 5 գյուղատնտեսական, 11 շինարարական, 3 տրանսպորտային, 26 ծառայություններ մատուցող և 75 մանրածախ գործող օբյեկտներ, որոնցից 33-ը խանութներ են, 38 –ը՝ կրպակներ, 4 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ: Գործել են նաև 35 հանրակրթական, 3 երաժշտական և արվեստի, 2 մարզական դպրոցներ, 5 նախադպրոցական հիմնարկ, 27 գրադարան, 7 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց, մարզային նշանակության մշակութալուսավորչական կենտրոններ և այլն:

**Արթիկի տարածաշրջան**

Վարելահողեր	13149 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	23
Գյուղական բնակավայրեր	23
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	48.9 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	17.4 հազ. մարդ
գյուղական	31.5 հազ. մարդ

**Արթիկի տարածաշրջանը** գտնվում է մարզի հարավ-արևելքում: Տարածքը հարուստ է տուֆի հանքերով, այստեղ զարգացած է ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը և բազմաճյուղ գյուղատնտեսությունը:

**Տարածաշրջանում** 2003թ. գործել են 37 արդյունաբերական, 3 շինարարական, 4 տրանսպորտային, 416 ծառայություններ մատուցող և 60 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 21-ը՝ խանութներ են, 33 -ը կրպակներ, 5 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ և 1 -ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկա: Տարածաշրջանում գործել են նաև 32

հանրակրթական, 3 երաժշտական և արվեստի, 4 մարզական դպրոցներ, 11 նախադպրոցական հիմնարկ, 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 27 գրադարան, 1 հյուրանոց, 6 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 3 հիվանդանոց, մարզային նշանակության մշակութալուսավորչական կենտրոններ և այլն:

**Արթիկ քաղաքը** (17.4 հազ.բնակիչ) գտնվում է Արագած լեռնազանգվածի հյուսիս-արևմտյան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1760 մ է: Քաղաքով անցնում են Մարալիկ-Գյումրի երկաթգիծը և Ապարան-Գյումրի խճուղին: Արթիկի արդյունաբերական արտադրանքի հզորության հենարաններն են՝ ալրադացը, ապակյա կաղապարների արտադրությունը և տուֆ արտադրող 9 մանր և խոշոր կազմակերպությունները:

2003թ. քաղաքում գործել են 22 արդյունաբերական (մշակող արդյունաբերություն), 3 շինարարական, 4 տրանսպորտային, 30 բնակչությանը ծառայություններ մատուցող և 35 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 11-ը խանութներ են, 2-ը՝ հանրային սննդի օբյեկտներ և 1 -ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկա: Քաղաքում գործել են նաև 8 հանրակրթական, 2 երաժշտական և արվեստի, 4 մարզական դպրոցներ, 1 պետական և 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 4 նախադպրոցական հիմնարկ, 1 գրադարան և 1 հյուրանոց, մարզային նշանակության մշակութալուսավորչական կենտրոններ և այլն:

**Անիի տարածաշրջան**

Վարելահողեր	14824 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	16
Գյուղական բնակավայրեր	20
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	20.6 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	5.8 հազ. մարդ
գյուղական	14.8 հազ. մարդ

**Անիի տարածաշրջանը** գտնվում է մարզի հարավ-արևմտյան հատվածում, համարվում է սահմանամերձ գոտի: Անիի տարածքը հայտնի է դեռևս IX դարից, որպես Բագրատունյաց թագավորության նստավայր: Տարածաշրջանում տնտեսության զարգացած ճյուղերն են ոչ մետաղական հանքային նյութերի (պեմզա) արդյունահանումը և բազմաճյուղ գյուղատնտեսությունը:

**Տարածաշրջանում** 2003թ. գործել են 6 արդյունաբերական, 3 շինարարական, 1 տրանսպորտային, 14 ծառայություններ մատուցող և 51 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 21 –ը խանութներ են, 30 –ը՝ կրպակներ:

Տարածաշրջանում գործել են նաև 19 հանրակրթական, 2 երաժշտական և արվեստի, 2 մարզական դպրոցներ, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 8 նախադպրոցական հիմնարկ, 19 գրադարան, 4 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հիվանդանոց, մարզային նշանակության մշակութա-լուսավորչական կենտրոններ և այլն:

**Մարալիկ քաղաքը** (5.8 հազ. բնակիչ) գտնվում է Արագած լեռնազանգվածի արևմտյան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1920 մ է: Այստեղով է անցնում Գյումրի - Թալին - Երևան մայրուղին: Քաղաքում զարգացած են տեքստիլ արդյունաբերությունը և շինանյութերի արդյունահանումը և գյուղատնտեսությունը:

2003թ. քաղաքում գործել են 3 արդյունաբերական (մշակող արդյունաբերություն), 1 շինարարական, 1 տրանսպորտային, 10 ծառայություններ մատուցող և 15 խանութներ:

Քաղաքում գործել են նաև 2 հանրակրթական, 2 երաժշտական և արվեստի, 2 մարզական դպրոցներ, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 2 նախադպրոցական հիմնարկ, 1 գրադարան, մարզային նշանակության մշակութալուսավորչական կենտրոններ և այլն:

**Աշոցքի տարածաշրջան**

Վարելահողեր	9891 հա
Քաղաքային համայնքներ	-
Գյուղական համայնքներ	25
Գյուղական բնակավայրեր	25
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	10.1 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	-
գյուղական	10.1 հազ. մարդ

**Աշոցքի տարածաշրջանը** գտնվում է մարզի հուսիս-արևելքում, համարվում է ինչպես մարզի, այնպես էլ հանրապետության ամենացուրտ տարածքը, գտնվում է ծովի մակերևույթից 2000-2200 մ բարձրության վրա: Լինելով բարձր լեռնային գոտի և հարուստ բնական խոտհարքներով, այստեղ հիմնականում զարգացած է անասնապահությունը: Տարածքով է անցնում Հայաստանը Վրաստանին միացնող ավտոմոբիլային խճուղին:

**Տարածաշրջանում** 2003թ. գործել են 1 արդյունաբերական, 1 գյուղատնտեսական, 1 տրանսպորտային, 10 ծառայություններ մատուցող և 33 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 18 -ը խանութներ են, 11 –ը՝ կրպակներ և 4 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ:

Տարածաշրջանում գործել են նաև 20 հանրակրթական և 1 երաժշտական դպրոց, 24 գրադարան, 3 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց, մշակութալուսավորչական կենտրոններ և այլն:

**Ամասիայի տարածաշրջան**

Վարելահողեր	14675 հա
Քաղաքային համայնքներ	-
Գյուղական համայնքներ	19
Գյուղական բնակավայրեր	26
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	7.1 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	-
գյուղական	7.1 հազ. մարդ

**Ամասիայի տարածաշրջանը** գտնվում է մարզի հյուսիս-արևմուտքում, սահմանամերձ է Թուրքիային և Վրաստանին, բնակլիմայական պայմանները թույլ են տալիս բնակչությանը զբաղվել հիմնականում անասնապահությամբ: Այստեղ է գտնվում նաև Արփի լիճը, որտեղից սկիզբ է առնում Ախուրյան գետը:

**Տարածաշրջանում** 2003թ. գործել են 1 արդյունաբերական, 10 ծառայություններ մատուցող և 18 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ:

Տարածաշրջանում գործել են նաև 17 հանրակրթական, 1 մարզական և 1 երաժշտական դպրոցներ, 19 գրադարան, 1 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 1 հիվանդանոց, մշակութալուսավորչական կենտրոններ և այլն:

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Գյումրի	ք. Գյումրի
Արթիկ	ք. Արթիկ
Մարալիկ	ք. Մարալիկ

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ազատան	Ազատան
Ալվար	Ալվար
	Արավետ
Ախուրյան	Ախուրյան
Ախուրիկ	Ախուրիկ
Աղին	Աղին
	Աղին կայարանի
Աղվորիկ	Աղվորիկի
Ամասիա	Ամասիա
Այգաբաց	Այգեբաց
Անի կայարան	Անի կայարանի
Անիպեմզա	Անիպեմզա
Անուշավան	Անուշավան
Աշոցք	Աշոցք
Առափի	Առափի
Արդենիս	Արդենիս
Արեզնադեմ	Արեզնադեմ
Արփենի	Արփենի
Արևիկ	Արևիկ
Արևշատ	Արևշատ
Բագրավան	Բագրավան Խարկով
Բայանդուր	Բայանդուր
Բանդիվան	Բանդիվան
Բաշգյուղ	Բաշգյուղ
Բավրա	Բավրա
Բենիամին	Բենիամին
Բերդաշեն	Բերդաշեն Պաղակն
Գառնառիճ	Գառնառիճ Եղնաջուր
Գեղանիստ	Գեղանիստ
Գետափ	Գետափ
Գետք	Գետք
Գյուլիբուլաղ	Գյուլիբուլաղ
Գոգիովիտ	Գոգիովիտ
Գտաշեն	Գտաշեն Կամխուտ
Գուսանագյուղ	Գուսանագյուղ
Երազգավորս	Երազգավորս

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ջարիշատ	Ջարիշատ
	Երիզակ
Ջորակերտ	Ջորակերտ
	Դարիկ
Ջույգաղբյուր	Ջույգաղբյուր
Թավշուտ	Թավշուտ
Թորոսգյուղ	Թորոսգյուղ
Իսահակյան	Իսահակյան
	Բարձրաշեն
Լանջիկ	Լանջիկ
Լեռնագյուղ	Լեռնագյուղ
Լեռնակերտ	Լեռնակերտ
Լեռնուտ	Լեռնուտ
Լուսակերտ	Լուսակերտ
Լուսաղբյուր	Լուսաղբյուր
Ծաղկուտ	Ծաղկուտ
	Լորասար
Կամո	Կամո
Կապս	Կապս
Կառնուտ	Կառնուտ
Կարմրավան	Կարմրավան
Կարմրաքար	Կարմրաքար
Կաքավասար	Կաքավասար
Կրաշեն	Կրաշեն
Կրասար	Կրասար
Հայկաձոր	Հայկաձոր
Հայկասար	Հայկասար
Հայկավան	Հայկավան
Հայրենյաց	Հայրենյաց
Հառիճ	Հառիճ
Հարթաշեն	Հարթաշեն
Հացիկ	Հացիկ
	Մայիսյան կայարանի
Հողմիկ	Հողմիկ
Հոռոմ	Հոռոմ
Հովիտ	Հովիտ
Հովտաշեն	Հովտաշեն
Հովտուն	Հովտուն
Հովունի	Հովունի
Չիթհանքով	Չիթհանքով
Չորակապ	Չորակապ
Չորաշեն	Չորաշեն
Ղազանչի	Ղազանչի
Ղարիբջանյան	Ղարիբջանյան
	Ախուրյան կայարանի
Մայիսյան	Մայիսյան
Մարմաշեն	Մարմաշեն
Մեծ Մանթաշ	Մեծ Մանթաշ
Մեծ Սարիար	Մեծ Սարիար
Մեծ Սեպասար	Մեծ Սեպասար
Մեղրաշատ	Մեղրաշատ
Մեղրաշեն	Մեղրաշեն
Մուսայելյան (Ախուրյանի տարածաշրջան)	Մուսայելյան
Մուսայելյան (Աշոցքի տարածաշրջան)	Մուսայելյան
Նահապետավան	Նահապետավան



<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրերի անվանումը</b>
Նոր կյանք	Նոր կյանք
Շաղիկ	Շաղիկ
Շիրակ	Շիրակ
Շիրակավան	Շիրակավան
Ողջի	Ողջի
Ոսկեհասկ	Ոսկեհասկ
Պեմզաշեն	Պեմզաշեն
Ջաջուռ	Ջաջուռ
Ջաջուռ կայարան	Ջաջուռ կայարանին կից
Ջրածոր	Ջրածոր
Ջրառատ	Ջրառատ
Ջրափի	Ջրափի
Սալուտ	Սալուտ
Սառնաղբյուր	Սառնաղբյուր
Սարագյուղ	Սարագյուղ
Սարալանջ	Սարալանջ
Սարակապ	Սարակապ
Սարապատ	Սարապատ
Սարատակ	Սարատակ
Սիզավետ	Սիզավետ
Սպանդարյան	Սպանդարյան
Վահրամաբերդ	Վահրամաբերդ
Վարդաղբյուր	Վարդաղբյուր
Վարդաքար	Վարդաքար
Տուֆաշեն	Տուֆաշեն
Յողամարգ	Յողամարգ
Փանիկ	Փանիկ
Փոքրաշեն	Փոքրաշեն
Փոքր Մանթաշ	Փոքր Մանթաշ
Փոքր Սարիար	Փոքր Սարիար
Փոքր Սեպասար	Փոքր Սեպասար
Քարաբերդ	Քարաբերդ
Քեթի	Քեթի

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003Թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	10 000	5106	4894
Ծնվածներ	114	58	56
Մահացածներ	85	43	42
Ամուսնություններ	48	X	X
Ամուսնալուծություններ	5	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	20.9	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	118	60	58
հանրակրթական	1754	896	858
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	97	50	47
միջին մասնագիտական	109	56	53
բարձրագույն մասնագիտական	186	95	91
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	19	...	...
Մարզիկներ, մարդ	309	158	151
Զբաղվածներ, մարդ	3094	...	...
նրանցից՝ գիտական հիմնարկներում	4	2	2
նրանցից՝ գիտության դոկտոր	0.0	0	0
գիտության թեկնածուներ	1	1	0
ուսուցիչներ	195	100	95
բժիշկներ	20	...	...
կրտսեր բուժանձնակազմ	63	...	...
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	953	487	466
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1821	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	1103	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	35234	...	...
թատրոն	546	...	...
համերգ	128	...	...
թանգարան	248	...	...
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	425	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, մարդ	463	...	...
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	29	X	X



Երևանի տաճարը Անիպենգա գյուղի մոտակայքում

